ՀՀ-ՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԱՌՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ

Յուրաքանչյուր սոցիալական համակարգ, որպեսզի պահպանի հավասարակշռությունը, ամբողջականությունը և շարունակականությունը, պիտի արդյունավետորեն իրականացնի հարմարման, նպատակադրման, ներառման և մշակութային նմուշների պահպանման գործառույթները[1]:

Հարմարման գործառույթի ներքո նկատի ունենք այն, որ սոցիալական պաշտպանության համակարգի միջոցով լուծվում է նյութական, մարդկային, մշակութային ռեսուրսների ռացիոնալ բաշխման խնդիրը, որը նման է ներքին իրավիճակներին և արտաքին փոփոխություններին հարմարվելու խնդրին: Նախքան ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգում բարեփոխումների իրականացումը այն կատարում էր վերաբաշխման գործառույթ, որին բնորոշ էր բնակչության սոցիալական պաշտպանության պասիվ ձևերի (դրամական վճարներ, արտոնություններ) կիրառումը: Սակայն ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում սոցիալական համալիր ծառայությունների համակարգի ներդրումը ենթադրում է, որ այն զուտ *վերաբաշխման գործառույթ կատարելու փոխարեն նպաստելու է մարդկային կապիտալի զարգացման միջոցով տնտեսական աճի ապահովմանը:* Փաստորեն, նախքան նշված բարեփոխման իրականացումը առավելապես կարևորվում էր ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի *ապահովող, այլ ոչ թե կանխարգելիչ գործառույթի իրականացումը:* Իսկ սոցիալական պաշտպանության համակարգի կանխարգելիչ գործառույթը ենթադրում է սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը ծնող պատճառները վերացնելուն և կանխարգելելուն միտված սոցիալական պաշտպանության ակտիվ ձևերի կիրառում:

Մյուս գործառույթը, որի իրագործումն առաջնային է համակարգի կայունության և հավասարակշռության պահպանման համար, *նպատակադրումն է և այդ նպատակների իրականացումը:*

Հատկանշական է, որ ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի նպատակները, ինչպես նաև դրանց հասնելու համար հա-

[1] Տե՛ս **Parsons T.** The Social System, The Free Press, New York, 1951:

մակարգից ակնկալվող խնդիրները օրենսդրորեն ձևակերպված են[2]: Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ նպատակները ոչ միայն հստակ ձևակերպված չեն, այլև որոշ մասը, ինչպես օրինակ՝ *ազգային ավանդույթների և առանձնահատկությունների պաշտպանությանը նպաստելը,* անմիջական առնչություն չունի սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական, առաջնային նպատակների հետ: Հետևաբար այդպիսի նպատակների առաջադրումը և դրանց իրագործման խթանումը չի կարող վկայել ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգի իրական *կենսունակության* մասին: Նպատակների առաջադրումը և դրանց իրագործումը վկայում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի կենսունակության մասին, սակայն սոցիալական պաշտպանության համակարգի իրական կենսունակությունը առաջին հերթին պայմանավորված է սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական, առաջնային նպատակների իրագործմամբ:

Այսպիսով, ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի նպատակները անհրաժեշտ է վերանայել և վերաձևակերպել այնպես, որ դրանք ուղղակիորեն վերաբերեն սոցիալական պաշտպանության համակարգի իրական նպատակներին:

Խնդրահարույց է նաև գործող համակարգի ներառման գործառույթի կենսագործման ուղիների հարցը: Եթե նախորդ երկու գործառույթները վերաբերում են համակարգի արտաքին միջավայրի հարաբերություններին, ապա այս գործառույթն առավելապես առնչվում է ներհամակարգային գործընթացների ու հարաբերությունների կարգավորմանը: Այն ենթադրում է նաև համակարգի հիմնական տարրերի, ենթահամակարգերի գործառման կանոնակարգում, համագործակցության ապահովում, որոնց իրագործումը, սակայն, այսօր լուրջ խնդիր է:

Գործող համակարգում պայմանականորեն կարող ենք առանձնացնել սոցիալական պաշտպանության իրականացման պետական, հասարակական և մասնավոր սեկտորները՝ որպես ինստիտուցիոնալ ենթահամակարգեր:

Պետական սեկտորի կարևոր տարրերից են ՀՀ **աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ), ինչպես նաև վերջինիս վերհսկողության ներքո գտնվող մի շարք կառույցներ,** որոնց պաշտոնական երեք գործառույթները՝ քաղաքականության մշակում, քաղաքականության իրականացման համակարգում և սոցիալական ծառայությունների տրամադրում, իրականացվում են հետևյալ ենթահամակարգերի միջոցով.

ա.կենսաթոշակային ապահովություն,

բ.աշխատանքի և զբաղվածության հիմնահարցեր,

---

[2] Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի № 452-Ն որոշման հավելված № 1:

գ.հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր,

դ.ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր,

ե.պետական նպաստների և կարիքավորներին տրամադրվող սոցիալական ծառայություններ,

զ. մոնիթորինգի և վերահսկողության ծառայություններ,

է. միջոլորտային գործառույթներ իրականացնող կառույցներ:

Բնակչությանը տրամադրվող *ընդհանուր մասնագիտական ծառայությունների մեծ մասը ԱՍՀՆ-ի գործառույթն է,* սակայն սոցիալական ծառայություններ մատուցում են *ՀՀ առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի, տարածքային կառավարման և զարգացման, սպորտի և երիտասարդության, գյուղատնտեսության, բնապահպանության, արտակարգ իրավիճակների նախարարությունները:*

Փաստորեն, նշված գերատեսչությունները և դրանց ենթակայության ներքո գտնվող կառույցները ևս դառնում են սոցիալական պաշտպանության իրականացման պետական սեկտորի տարրեր:

Սոցիալական պաշտպանության իրականացման հասարակական սեկտորը՝ որպես գործող համակարգի առանձին ինստիտուցիոնալ ենթահամակարգ, որոշակի դեր ունի ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում: Ենթահամակարգի *կարևոր տարրերից են հասարակական կազմակերպությունները,* որոնց ձևավորման բարձր տեմպ արձանագրվեց հատկապես ՀՀ անկախության ձեռքբերումից հետո:

Քանի որ այս ենթահամակարգը ևս որոշակի դեր ունի բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում, ուստի նախ և առաջ կարևոր է վերլուծել բնակչության սոցիալական պաշտպանության իրականացման պետական և հասարակական սեկտորների՝ որպես համակարգի ինստիտուցիոնալ ենթահամակարգերի միջև փոխազդեցությունը/համագործակցությունը: Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի պետական սեկտորի վերաբերմունքը հասարակականի նկատմամբ: Հարկ է նշել, որ հասարակական սեկտորը դեռևս լիարժեք կարևորված չէ: Բացի այդ, հասարակական սեկտորի կողմից մատուցվող ծառայությունների հիմնական մասը կենտրոնացված է մեծ քաղաքներում, մինչդեռ մնացած բնակավայրերում ծառայությունների ծածկույթը շատ նոսր է: Թույլ համակարգման պատճառով միևնույն տարածաշրջանում կարող են մատուցվել նույնաբովանդակ ծառայություններ՝ առաջացնելով վերածածկեր, այն դեպքում, երբ առանձին տարածաշրջաններ կարող են դուրս մնալ որևէ ծառայություն/ծրագրից օգտվելու հնարավորությունից:

Անդրադառնալով սոցիալական պաշտպանության համակարգի մյուս ենթահամակարգերին՝ հարկ է նշել, որ վերջին տասնամյակում աշխարհի զարգացած երկրներում դիտվում է պետության կողմից սոցիալական ծառայությունների շուկայում մենաշնորհային դերից հրա-

ժարվելու միտում՝ խրախուսելով սոցիալական պաշտպանության այլ սուբյեկտների, հատկապես՝ մասնավոր, հասարակական սեկտորների, ինչպես նաև ՏԻՄ-երի մասնակցությունը: Սակայն այս առումով դեռ շատ անելիքներ կան ՀՀ-ում: Ինչպես տեղին նշում է Ս. Աստվածատուրովը, սոցիալական պաշտպանության համակարգում ներառված չեն հատկապես խոշոր ձեռնարկությունները[3]: Բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում կարևոր դերակատարում ունի մասնավոր սեկտորը[4], մինչդեռ մեր երկրում մասնավոր սեկտորի և պետության միջև համագործակցությունը բավականին թույլ է:

Ինչ վերաբերում է հասարակական և մասնավոր սեկտորների համագործակցությանը, ապա հարկ է նշել, որ նման ինստիտուցիոնալ համագործակցության մշակույթը Հայաստանում դեռևս ձևավորված չէ: Մասնավոր սեկտորը չի գիտակցում իր դերը ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման մեջ: Ավելին, այն ոչ համագործակցային տրամադրվածություն ունի առավել ակտիվ գործող ՀԿ-ների նկատմամբ, քանի որ առաջնորդվում է այն կարծրատիպով, որ ՀԿ-ները զբաղվում են գումարների փոշիացմամբ և կարող են դիմել մասնավոր սեկտորին՝ միայն գումար կորզելու նպատակով: Այս դեպքում բնական է, որ համագործակցության նախաձեռնությունը պատկանում է ՀԿ-ներին, սակայն դա ոչ միշտ է հաջողվում: Մասնավոր սեկտորը հիմնականում պատկերացում չունի բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման հարցում ՀԿ-ների դերի և նշանակության մասին:

Մասնավոր սեկտորի՝ ՀԿ-ների հետ համագործակցության բացակայությանը նպաստում է նաև այն, որ պետությունը մասնավոր սեկտորին արտոնություններ չի տրամադրում հասարակական ոլորտում անհատույց ներդրումներ կատարելու դիմաց:

Անդրադառնալով տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որպես սոցիալական պաշտպանության համակարգի տարրի՝ հարկ է նշել, որ 2002 թվականի մայիսի 7-ին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որով կարևորվեց տեղական ինքնակառավարման մարմինների դերը: Այդ օրենքով աշխատանքի և սոցիալական ծառայությունների ոլորտում ՏԻՄ-երին վերապահված են հետևյալ կամավոր լիազորությունները՝ նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստելը, վճարովի հասարակական աշխատանքներ կազմակերպելը,

---

[3] Տե՛ս **Аствацатуров С. В.** Социальная защита в системе экономических и социальних координат // «Изменяющееся общество», Ер., 1997, № 1, 2, էջ 41:

[4] Մասնավոր սեկտորը ընկալվում է որպես շուկաների ամբողջություն, որոնցում վաճառողները՝ սոցիալական ծառայություններ առաջարկողները, և գնորդները՝ ներկա և ապագա շահառուները, փոխհարաբերությունների մեջ են մտնում սոցիալական բնույթի որոշակի ապրանքների և ծառայությունների շուրջ՝ նպաստ, կենսաթոշակ, ապահովագրություն և այլն: Մասնավոր սեկտորը սոցիալական պաշտպանության ապահովման կարևոր սուբյեկտներից է հատկապես զարգացած երկրներում:

հաշմանդամություն ունեցող, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելը, իսկ ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգում ՏԻՄ-երը իրականացնում են պետության պատվիրակած ընդամենը մեկ լիազորություն՝ համայնքի տարածքում սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների գործունեությունը կազմակերպելը[5]: Սակայն ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգում ՏԻՄ-երի կամավոր լիազորությունները մնում են դեռևս չիրագործված՝ վերջիններիս կադրային, նյութական, ֆինանսական համապատասխան ռեսուրսների բացակայության պատճառով[6]:

ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում ավանդաբար կարևորվում է նաև *ոչ ձևական ցանցի դերը:* Այս դեպքում խոսքը համայնքի, ընտանիքի, բարեկամների, ընկերների, հարևանների կողմից ցուցաբերվող օգնության մասին է:

Վերը ասվածից հետևում է, որ ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի ինստիտուցիոնալ ենթահամակարգերի միջև փոխազդեցությունը բավականին թույլ է, իսկ որոշ ենթահամակարգերի միջև այն ընդհանրապես բացակայում է: Իսկ սա վկայում է ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի *ամբողջականության խախտման մասին,* քանի որ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ամբողջականությունը պայմանավորված է նաև նրա ենթահամակարգերի միջև առկա փոխազդեցությամբ[7]: Ուստի կարող ենք ասել, որ, ըստ էության, վտանգված է ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի կայունությունը:

Այսպիսով՝ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության գործող պատասխանատուների միջև թույլ համագործակցությունը, իսկ որոշ դեպքերում նաև՝ վերջինիս բացակայությունը, վկայում են այն մասին, որ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը դեռևս չի ավարտվել:

Ամփոփելով ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի հիմնական գործառույթներն ու դրանց հիման վրա խոցելի խմբերին առաջարկվող հիմնական ծրագրերը՝ կարող ենք եզրակացնել, որ *սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախ են* նախ և առաջ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անձինք:

Ներկայիս գործադիր կառավարման ոլորտի ներկայացուցիչների

---

[5] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը:

[6] Տե՛ս **Եվ. Վարդանյան,** ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների դերը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում, // «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2014 թ., (№ 2), էջ 14:

[7] Տե՛ս Аствацатуров С. В. О специфике социологического познания социальной политики // Научные труды ЕГЛУ им. В. Брюсова, общественные науки. Лингва, прак 1, Ер.,. 2002, էջ 48:

մեծ մասը հակված է սոցիալական պաշտպանության թիրախի դերում տեսնել միայն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հայտնվելու ակնհայտ վտանգի առջև կանգնած անձանց:

ՀՀ-ում սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախ են նաև բնակչության առանձին խմբերը, ինչպիսիք են՝ զինծառայողները, կրթության, առողջապահության ոլորտների աշխատողները, որոնց ևս տրամադրվում են մի շարք սոցիալական ծառայություններ: Օրինակ՝ 2012 թ. ՀՀ-ում ներդրված սոցիալական փաթեթը[8] քաղաքացիական և պետական ծառայողներին, պետական պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպությունների վարչական և մասնագիտական պաշտոններ զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամներին՝ անկախ զբաղեցրած պաշտոնից և վարձատրության չափից, հավասարապես հնարավորություն է ընձեռում օգտվելու մի խումբ սոցիալական ծառայություններից:

Մեր իրականացրած որակական հետազոտությունից պարզվում է, որ կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են ՀՀ սոցիալական պաշտպանության ներկա համակարգի ձևավորման գործընթացը տրամաբանական ավարտին հասցնել: Դրանցից է, օրինակ, ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի *գաղափարական հենքի անհստակությունը:* Այս տեսանկյունից կարևորվում է հետևյալ հարցադրումը. ո՞րն է ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի գաղափարական հենքը: Այս հարցին իրականում այնքան էլ հեշտ չէ պատասխանել: Պրակտիկայում կարելի է հանդիպել *մեկ պետական պատերնալիստական, մեկ ազատական, մեկ միաժամանակ երկու հայեցակարգային մոտեցումների, մեկ ներմուծովի՝ մարդու իրավունքների վրա հիմնված հայեցակարգի:* Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ այն ամենը, ինչը այսօր տեղի է ունենում Հայաստանում, զգալիորեն համահունչ է նորազատականության (նեոլիբերալիզմի) տրամաբանությանը. սեփականաշնորհել հանրային սեփականությունը, անխնա շահագործել բնական ռեսուրսները և այլն[9]:

Մյուս հիմնախնդիրն այն է, որ թեև պաշտոնապես հայտարարված է սոցիալական պաշտպանության կազմակերպման ապակենտրոնացման գործընթաց[10] սկսելու մասին, այնուամենայնիվ առ այսօր *սոցիա-*

---

[8] Տե՛ս ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի № 1692-Ն որոշումը, http://www.arlis.am/documentview.aspx?docID=81051, 17.01. 2017թ., ժամը՝ 11:37:

[9] Տե՛ս **Մ. Ցարմալոյան,** ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ներկա համակարգի գաղափարախոսական հենքի հստակեցման և սոցիալական պաշտպանության ազգային մոդելի մշակման անհրաժեշտությունը // «Այլընտրանք» գիտական հանդես, 2015, № 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 342-343:

[10] Տե՛ս **Մ. Ցարմալոյան**, Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը հետխորհրդային Հայաստանում // «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2014, (№ 1), էջ 23:

յական պաշտպանության գլխավոր սուբյեկտը պետությունն է:

Փաստորեն այդ գործընթացը նոր խնդիրներ է առաջացրել տեղական իշխանությունների համար՝ ավելացնելով վերջիններիս պատասխանատվությունների և գործառույթների քանակը՝ առանց համապատասխան ֆինանսական հատկացումների: Պարտականությունների բաշխման նման փոփոխությունները հավասարակշռման խնդիր են ստեղծում, որը հնարավոր է լուծել ճկուն սոցիալական քաղաքականություն իրականացնելու միջոցով: Պատասխանատվության հավասարակշռության նման խախտումները, ինչպես նաև պատասխանատվությունների իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում են ՀՀ սոցիալական պաշտպանության ներկա համակարգի արդյունավետ գործառումը:

Առ այսօր օրենսդրորեն լուծված չէ *սոցիալական պաշտպանության ոլորտում լիազորությունների տարանջատման խնդիրը.* օրենքներում հաճախ կիրառվում է «պետական կառավարման մարմին» ընդհանրացնող տերմինը: *Օրենսդրորեն տարանջատված չեն բնակչության սոցիալական պաշտպանության հիմնական սուբյեկտները (դերակատարները), ինչպես նաև հստակ սահմանված չեն յուրաքանչյուր սուբյեկտի պարտավորությունների և լիազորությունների շրջանակները:*

Բացի այդ, օրենսդրորեն կարգավորված չեն *բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպման ձևերը, մշակված չեն սոցիալական պաշտպանության իրականացման գործուն մեխանիզմներ: Սոցիալական պաշտպանության ձևերի տեսանկյունից առավելապես կարևորվում է սոցիալական օգնությունը, իսկ սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքներն ու մեխանիզմները այնքան էլ զարգացած չեն*:

Օրենսդրական կարգավորման կարոտ են նաև սոցիալական պաշտպանության կազմակերպման գործում *կառավարման յուրաքանչյուր մակարդակի իրավասությունները*, և դա բացասաբար է ազդում ՀՀ բնակչության սոցիալական երաշխիքների իրականացման վրա: Ստեղծված իրավիճակը թելադրում է հստակեցնել օրենսդրական դաշտը և իրավասությունների շրջանակները:

Օրենսդրորեն սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախ են սահմանված միայն կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձինք, ինչը հակասում է սոցիալական պետության հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև համապատասխան փաստաթղթում[11] *ամրագրված՝ ՀՀ սոցիալական պաշտպանության հիմնական նպատակներին:*

ՀՀ ներկայիս սոցիալական օգնության պետական միջոցառումները ոչ արդյունավետ են: Վերոնշյալ բոլոր աղբյուրները չեն «բարձրաց-

[11] Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի № 452-Ն որոշման հավելված № 1-ը:

նում» անապահով քաղաքացիների կենսաապահովման նվազագույն զամբյուղի մակարդակը: Իսկ վերջինիս մեծությունը՝ որպես պետական սոցիալական օգնության նվազագույն նորմատիվ, ընդամենը ստեղծում է գոյատևման պայմաններ:

Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծառայությունների տեսականու պակաս (դեֆիցիտ) կա: ՀՀ-ում սոցիալական պաշտպանությանն ուղղված ծառայություններ տրամադրող կառույցների թիվը գնալով մեծանում է, սակայն այդ կառույցները նոր տիպի ծառայություններ չեն տրամադրում: Բավականաչափ զարգացած չեն վերականգնողական և խորհրդատվական ծառայությունները, որոնք կանխարգելիչ նշանակություն ունեն: Բավականին դանդաղ են կայանում մասնագիտացված սոցիալական ծառայությունները:

Ցածր է նաև սոցիալական պաշտպանության համակարգում աշխատող մասնագետների պրոֆեսիոնալիզմը, որը հիմնականում պայմանավորված է մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները կատարելագործելու մոտիվացիայի բացակայությամբ, աշխատանքից բավարարված լինելու ցածր մակարդակով:

Սոցիալական պաշտպանության համակարգը անհամարժեք է ֆինանսավորվում. պետական բյուջեից ավելի շատ ֆինանսական միջոցներ են տրամադրվում սոցիալական ծառայություններ մատուցող ստացիոնար հաստատություններին, քան ոչ ստացիոնար հաստատություններին, այնինչ դրանք քիչ ծախսատար են և ավելի արդյունավետ են գործում:

Սոցիալական պաշտպանության իրականացման *պետական և մասնավոր, ինչպես նաև հասարակական սեկտորների միջև համագործակցությունը բավականին թույլ է,* ինչը հակասում է սոցիալական պետության այն հիմնարար սկզբունքին, որ սոցիալական պետությունում բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում պետությունից զատ՝ կարևոր դեր ունեն այլ սուբյեկտներ ևս, մասնավորապես՝ հասարակական և մասնավոր սեկտորները:

Անդրադառնալով վերոնշյալ հիմնախնդիրների լուծման ուղիներին՝ կարևորում ենք *սոցիալական պաշտպանության հայեցակարգի մշակումը,* ինչը հույժ անհրաժեշտություն է: Այն մշակելիս անպայմանորեն պետք է հաշվի առնել՝

- սոցիալ-մշակութային ներուժի առկայությունը,
- հայեցակարգը պետք է համահունչ լինի ժողովրդավարության սկզբունքներին,
- անպայմանորեն պետք է շեշտվի մարդու իրավունքները հարգելու անհրաժեշտությունը:

Այս հիմնախնդիրների լուծման համար նպատակահարմար է իրականացնել հետևյալ փոփոխությունները՝

- վերանայել համապատասխան փաստաթղթում ներկայացված

«սոցիալական պաշտպանություն» եզրույթի սահմանումը՝ շեշտելով սոցիալական անվտանգության ապահովման գաղափարը:

➢ Հստակեցնել սոցիալական պաշտպանության համակարգի գաղափարախոսական հենքը, հիմնական նպատակները:

➢ Մշակել սոցիալական պաշտպանության հայեցակարգ, ռազմավարություն:

➢ Ընդունել «Բնակչության սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, որում անհրաժեշտ է՝

✓ սահմանել բնակչության սոցիալական պաշտպանության օբյեկտները՝ սոցիալական պաշտպանության օբյեկտ դիտելով ոչ միայն կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց,

✓ տարանջատել բնակչության սոցիալական պաշտպանության սուբյեկտներին (դերակատարներին)՝ հստակ սահմանելով յուրաքանչյուրի պարտավորությունների և լիազորությունների շրջանակները,

✓ սահմանել սոցիալական պաշտպանության կազմակերպման գործում կառավարման յուրաքանչյուր մակարդակի իրավասությունները,

✓ սահմանել բնակչության սոցիալական պաշտպանության ձևերը:

➢ Վերանայել բնակչության տարբեր կատեգորիաների համար նախատեսված արտոնությունների համակարգը:

➢ Ուժեղացնել սոցիալական պաշտպանության ապահովագրության սկզբունքներն ու մեխանիզմները:

➢ Խթանել պետություն-հասարակական սեկտոր կառուցողական հարաբերությունները՝ կարևորելով սոցիալական պատվերի ձևավորման գաղափարը:

➢ Զարգացնել սոցիալական ապահովագրության համակարգը ապահովադիրների՝ վարձու աշխատողների, գործատուների, ինքնազբաղվածների մասնակցությամբ:

➢ Խթանել քաղաքացիների նախաձեռնությունը՝ ուղղված սեփական անձի նյութական ապահովվածությանը, ինքնաբավությանը, ինքնապաշտպանությանը՝ կարևորելով նրանց համար տնտեսական ակտիվության դրսևորման հնարավորությունների ապահովումը:

➢ Վերանայել բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ֆինանսավորման սկզբունքները՝ կարևորելով սոցիալական ծառայություններ տրամադրող ոչ ստացիոնար հաստատությունների ֆինանսավորումը:

➢ Բարձրացնել սոցիալական պաշտպանության համակարգում աշխատող մասնագետների պրոֆեսիոնալիզմը՝ առավելություն տալով մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգերի կատարելագործմանը:

Այսպիսով՝ վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը կնպաստի ՀՀ-ում սոցիալական պաշտպանության արդյունավետ գործառող համակարգի ձևավորմանը:

Բանալի բառեր - *սոցիալական պաշտպանության համակարգ, սոցիալական պաշտպանության ենթահամակարգ, սոցիալական պաշտպանության հայեցակարգ, սոցիալական պաշտպանության օբյեկտ, սոցիալական պաշտպանության սուբյեկտ*

МАРИНЕ ЯРМАЛОЯН – ***Возможности формирования эффективной системы социальной защиты в РА.*** – В статье представлены основные проблемы, препятствующие формированию эффективной системы социальной защиты в Армении. Предлагаются возможные решения этих проблем.

Ключевые слова: *система социальной защиты, подсистема социальной защиты, концепция социальной защиты, объект социальной защиты, субъект социальной защиты*

MARINE YARMALOYAN – ***The Opportunities of Formation of Effective Functioning Social Protection System in RA.*** **–** The article presents the main problems impeding the formation of effective functioning social protection system in RA. The author also suggests possible solutions to those problems.

Keywords: *social protection system, social protection subsystem, social protection concept, social protection object, social protection subject*